March 3rd, 2019

Shoghk Educational

In this Issue:

- Մեծ պահքի կիրակիները

- Բուն Բարեկենդան (Մեծ պահքի առաջին կիրակի)

St Yeghiche Armenian Church Parish

Reg Charity No 1173403

13b Cranley Garden, Kensington London SW7 3BB, UK

t.020 7373 8133, e. info@styeghiche.org.uk

w. www.styeghiche.org.uk , f. www.facebook.com/styeghiche

Welcome to Shoghk Educational

Մեծ պահքի կիրակիները

Մեծ պահքն ընդգրկում է վեց կիրակիներ, որոնք կապված են աստվածաշնչյան վեց պատմությունների հետ: Այս կարգը սահմանել են **Հակոբոս Տյառնեղբայրը (I դար)** և **Կյուրեղ Երուսաղեմացին (IV դար)**: Այդ կիրակիներն են՝ Բուն բարեկենդան, Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատավորի և Գալստյան՝ միասնաբար կազմելով մի «ոսկե շղթա»:

1)Բուն բարեկենդան (տես ավելին)
2)Արտաքսման կիրակի (տես ավելին)
3)Անառակի կիրակի (տես ավելին)
4)Տնտեսի կիրակի (տես ավելին)
5)Անիրավ դատավորի կիրակի (տես ավելին)
6)Գալստյան կիրակի (տես ավելին)

Եզրափակվում է Մեծ պահքի «**ոսկե շղթան**»: Սրանով քրիստոնեական Եկեղեցին իր հավատացյալներին հրավիրում է ըմբռնելու Քրիստոսի Երկրորդ գալուստի խորհուրդը: Քրիստոսն Իր առաջին գալուստով քանդեց դժոխքի կապանքները և բացեց դրախտի դռները, իսկ Երկրորդ գալուստով պիտի մեղավորներին դատի և արդարներին երկնքի արքայությանն արժանացնի:

Մեծ պահքի ընթացքում հավատացյալներին առիթ է ընծայվում մտածելու փրկագործության խորհրդի մասին: Անհրաժեշտ է, որ մարդիկ գիտակցեն իրենց ընծայված այս պարգևի արժեքը: Մեծ պահքը հոգևոր մի յուրահատուկ ճանապարհորդություն է, որն ամեն տարի մեզ առաջնորդում է դեպի սուրբ Զատիկ և արժանացնում տոնելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Եվ այսպես, Բուն Բարեկենդանին սկսած պահքը լուծում ենք սուրբ Զատիկից մեկ օր առաջ՝ շաբաթ երեկոյան, Ճրագալույցի պատարագից հետո: Պահքի և ապաշխարության խորհուրդը ճանապարհ է, որի հանգրվանը հարության ուրախությունն է:

Բուն Բարեկենդան (Մեծ պահքի առաջին կիրակի)

Մեծ պահքի առաջին կիրակին ունի արարչության առաջին օրվա ու այս կյանքի առաջին դարի խորհուրդը և կոչվում է «**Բուն բարեկենդան**»: Ինչպես Դրախտում, մինչև անհնազանդությունը, «**առաջին պատմուճանով**» զարդարված նախաստեղծները ճաշակում էին Եդեմի անուշահամ պտուղները և ուրախանում հրեշտակների հետ, այդպես էլ այսօր Եկեղեցու զավակները, զարդարված Աստծու օրենքներով և ճաշակելով Աստծու պատվիրանները, ցնծում են և հոգևոր օրհնություններ վերառաքում:

Բուն բարեկենդանի նախորդ օրը՝ Երեկոյան ժամերգությանը, վարագույրով ծածկում են եկեղեցու բեմը, որը խորհրդանշում է Ադամի արտաքսումը Դրախտից, և այնուհետև՝ մինչև Ծաղկազարդ, Ավետարանը չի համբուրվում և «**Հաւատամքի**» ու «**Կեցցոյի**» ժամանակ չի բարձրացվում՝ ի տես ժողովրդին: Եկեղեցու խորհուրդները նման են ծածկված գանձի, և ով փնտրի, նա կգտնի այն ու կհանի հին ու նոր մեկնություններ՝ համաձայն Տիրոջ խոսքի. «**Երկնքի արքայությանն աշակերտած ամեն մի օրենսգետ նման է տանուտեր մարդու, որ իր գանձերից հանում է նորն ու հինը**» (Մատթ. ԺԳ 44, 52): Սա ճիշտ է նաև բարեկենդանի խորհրդի համար, որը պահքի սկիզբն է:

Ինչպես մենք այսօր ստանում ենք պահքի պատվիրանը մարգարեներից, առաքյալներից ու ավետարանիչներից, այդպես էլ առաջին մարդը պատվիրան ստացավ Տիրոջից Դրախտում. «**Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող եք ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք**» (Ծնն. Բ 16-17): Եվ ըստ այդ օրենքի՝ ամեն ծառից ուտելը խորհրդանշում է բարեկենդանը, իսկ մեկից չուտելը, որը Դրախտի մեջտեղում է, խորհրդանշում է պահքը, որը Բուն բարեկենդանի և Զատկի մեջտեղում է:

Սուրբ հայրերն ավանդում են, որ բարեկենդանը Դրախտի փափկության օրինակն է, իսկ նրանում եղող ծառերն ու բողբոջները՝ Եկեղեցու զավակների օրինակը: Կենաց ծառը, որը Դրախտի մեջտեղում է, Քրիստոսի օրինակն է Եկեղեցում, իսկ պտղաբեր ծառերն ու զանազան երփներանգ, անուշահոտ բույրով ծաղիկները առաքյալներն են, մարգարեները և ավետարանիչները, ինչպես նաև Եկեղեցու սուրբ վարդապետները, ովքեր փայլում են նոր զգեստներով: Նրանք Քրիստոսի անուշ բուրմունքն են՝ ըստ Պողոսի խոսքի. «**Քրիստոսի անուշ բուրմունքն ենք Աստծու առջև**» (Բ Կորնթ. Բ 15):

Արդ՝ Բուն բարեկենդանի ու Զատկի օրերը պահքի հետ միասին կազմում են հիսուն օր, իսկ հիսունը հոբելյանական թիվ է և խորհրդանշում է մեր ազատությունը մեղքերի ծառայությունից ու դարձը դեպի մեր հայրենին՝ ըստ հոբելյանի օրենքի (տե՛ս Ղևտ. ԻԵ 10): Բուն բարեկենդանը ցույց է տալիս մեր այս կյանքից ելնելը, ինչպես բարեկենդանի օրը ելնում ենք մարմնավոր կերակուրներից, քանզի մինչև Զատիկ այլևս չենք ուտելու, իսկ Զատիկը ցույց է տալիս կյանքի մեջ մտնելը, քանզի այդ օրը ճաշակում ենք երկնային Գառը, որը ցույց է տալիս, որ Քրիստոսի չարչարանքների միջոցով արժանանում ենք վերին խորանին և Նրա անպատում բարիքներին:



Բուն բարեկենդանի օրը փակվում է Եկեղեցու **վարագույրը**՝ Ադամի Դրախտից ելնելու խորհրդով, և մինչև Զատիկ **Ավետարանն** այլևս չի համբուրվում, ինչպես Ադամը զրկվեց Կենաց ծառի ճաշակումից: Այսօր վանքերում ամենուր չափավոր վայելքներ են թույլատրվում, քանզի հաջորդ օրն այլևս հրաման չկա ուտելու: Սա վերցված է Եղիային ուղղված հրեշտակի խոսքից. «**Ելի՛ր, կե՛ր, որովհետև երկար ճանապարհ ես գնալու**» (Գ Թագ. ԺԹ 7), և այդ երկար ճանապարհը քառասնօրյա պահքի շրջանն է: Այդպես էլ այսօր մեզ համար կան մարմնավոր կերակուրներ, քանզի առջևում մեզ երկար պահք է սպասվում: Ինչպես օրինակ՝ հասնելով լեռան ստորոտին՝ գրաստի վրայից վերցնում ենք բեռները՝ թույլ տալով մի որոշ ժամանակ արածել, նույնպես և վարվում ենք բարեկենդանի ժամանակ, քանի որ պահքի լեռն ենք բարձրանալու:

Բարեկենդանն արձակումն է պահքի նեղություններից, որը նշանակում է փոփոխություն՝ ի հակադրություն ծոմի ու ծարավի, այսինքն՝ մատնացուցում է ուտելն ու խմելը՝ իբրև անցում սուգից դեպի ուրախություն, տքնությունից՝ փափկակեցություն, չարչարանքից՝ հանգստություն և այլն: Բարեկենդանը խորհրդանշում է նաև **Դրախտի** կյանքն առանց որևէ կարոտության, իսկ պահքն այս կյանքի կարոտություններն է խորհրդանշում:

Եվ դարձյալ՝ բարեկենդանը խորհրդանշում է հոգու ամբողջովին փարթամացած առաքինությունները, իսկ պահքը՝ չարությունը, որովհետև չարությունից հոգին նվազում է ու կարոտում ամեն տեսակ բարիքների, ինչպես որ պահքից մարմինն է նվազում: **2019թ. «Մեծ Պահքի» պահեցողությունը սկսվում է Մարտ 4-ից:**

Աշխատասիրությամբ՝ Արամ Դիլանյանի

“Eat and Drink because you will be traveling a long road”

(I King 19:7)

St Yeghiche Armenian Church’s Educational Series

We are pleased to introduce these Educational Series of leaflets which are prepared to inform our Community Members of the various traditions, Customs and Canons of the Armenian Apostolic Church which has been passed over the centuries and preserved to date.

To help us expand these Educational and Informative Series we are looking for voluntary contributions towards the printing costs.

For your Donations to the Publication Fund, please make your cheques payable to “St Yeghiche Armenian Church Parish” and kindly post them to: **St Yeghiche Armenian Church** Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F.

We thank you for your kind support.

For Enquiries and Booking:

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններ ուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 48 777 147:

St Yeghiche Armenian Church Parish

Reg Charity No 1173403
13b Cranley Gardens
Kensington London SW7 3BB
Phone: 020 7373 8133
Email : info@styeghiche.org.uk
Web: www.styeghiche.org.uk
Face book: www.facebook.com/styeghiche

«Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող եք ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք» (Ծնող. Բ 16-17)

Look always for our Educational Series Booklets

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն քո:
Եկեսցէ արքայութիւն քո:
Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի:
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:
Եւ թող մեզ զպարտիս մեր,
Որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն
Այլ փրկեա զմեզ ի չարէ.
Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն
Եւ փառք յաւիտեանս. Ամէն:

Hair mer, vor hergins yes,
Sourp yeghitzi anoon ko.
Yegestze arkayootioun ko.
Yeghitzin gamk ko vorbes hergins yev hergri.
Uzhatz mer hanabazort dour mez aisor.
Yev togh mez uzbardiz mer,
Vorbes yev mek toghoumk merotz bardabanats;
Yev mi danir uzmez ee portzoutiun,
Ail purgia uzmez ee chareh.
Zi ko eh arkayootiun yev zorootiun Yev park havidians.
Amen.